

№ 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1887

15

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 10

«Աղբիւրի» գրականական տարեգիրք Գէորգ Դ. Կաթողիկոս Հայոց։
Ամպ և քամի (ոտանաւոր) . . . . . Ընծայողի։
Վահան Մամիկոնեան (Հայոց Պատմութիւնից) . Ա. Բարխուդարեան։
Լուսացեալ Ներսէս պատրիարք։
Վերջին հրաժեշտ (բանաստեղծութիւն . . . Աղէք. Մատուրեան։
Ռոբինզոն . . . . . Փ. Վարդանեան։

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ընտանեկան դրոյցները (Դիսանդէից) Աչք և տեսողական զգայարանքներ . . . . . Խաչիկ։

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Սեւան ԺԱ . . . . . Ն. Տէր-Աւետիքեան։

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հոկայ սպունգ։ Ինչպէս կարել ասպակին։ Մեղուի լեզուն։ Մակասակին ասպակի։ Պատուհանը բաց քնել։ Հոտատելիք։

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Աժան հեռագիրը։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Հանելուկներ։ Այսրնգի։ Լուծումն 14 բառով հանելուկի։ Նախընթաց №№-ի մէջ եղած հանելուկների և ընթերցի բացատրութիւնը։ Յայտարարութիւններ։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՄԱՏԵՆԱԳՈՒԹԻՒՆ

Բանաստեղծութիւններ Յովհաննէս Յովհաննիսեանի։
1) Ուրիշի գերեզմանի վրայ առանց արտասուքի են լաց լինում։ 2) Բուլղար աւազակապետ։ 3) Նեղա։ Գ. Ագայեանց։
Խառն լուրեր. Այլազգիներու յօգուտ։ Գէորգեան հեմարանի 13-րդ տարեդարձ։ «Աղբիւրի» պրէմիան։ Հայր Խորէնի վերադարձ։ Արուեստի եւ Մանուէլի բաժանորդներ։ Խմբագրութեան ստացած գրքեր։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ԲԱՑՈՒԱԾ է առաջիկայ **1888** թ. «ԱՂԲԻՒՐԻ» VI տարեայ բաժանորդագրութիւնը. **1888** թուի «ԱՂԲԻՒՐԻ» բաժանորդագրիչը **ԵՐԵՔ** բուրլի է—ՊՐԻՄԻԱՆԵՐՈՎ. Հանդերձ. Նարտիթիւններ «ԱՂԲԻՒՐԻ» VI-րդ տարեշրջանի՝ կը հաղորդենք միւս համարում առանձին յայտարարութեան մէջ։ Առ այժմ աւելորդ չենք համարում յայտնել, որ մտադրութիւն կայ «ԱՂԲԻՒՐԻ» ծնողների բաժինը խիստ ընդարձակել աւելացնելով բելլետրիստիկական մի մաս, եթէ «ԱՂԲԻՒՐԻ» բաժանորդների թիւը հասնի **2000**-ի. իսկ **ԱՌԱՋԻՆ** բաժնի համար ամեն ջանք պիտի անենք, որ նա իր բուն մանկավարժական նպատակին ծառայելով իսկ, լինի միևնոյն ժամանակ ռուսահայատակ հայերի համար իլլիւստրասիոն փոխարինող մի շքեղ հանդէս։

ՄՇԱԿ

Հրատարակվում է Թիֆլիզում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռ. է, վեց ամսուանը 6 ռ.

Գրուել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաքինսկայա և Բարգաբնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը)։

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրուելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «ՄՇԱԿԸ». իսկ արտասահմանից. Tiflis. Rédaction du journal arménien «MSCHAK»

Խմբ.-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԼ

ՐԱՖՖԻ

ԿԱՅԾԵՐԻ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ

ԳԻՆՆ Է 2 Ր. 50 Կ.

Ձանազարդիչ ծախքը հեղինակի վրայ է։ Գիրքը բաղկացած է 722 մեծադիր երեսներից։ Վաճառվում է «Թիֆլիսի Կենտրոնական դրամատունում» և հեղինակի մօտ։

Բաժանորդները պէտք է կանխաւէս յայտնեն իրանց հասցէն, եթէ տեղափոխուել են իրանց նախկին տեղից։

РУССКІЙ ВИНОДѢЛЪ

Двухнедѣльный журналъ

Подписной годъ съ 1 января 1887 г. по 1 января 1888 г.

Въ журналѣ участвуютъ слѣдующія лица: князь З. А. Джорджадзе, Х. А. Вермишевъ, П. В. Дзюбенко, С. Ф. Дикенсонъ, М. В. Неручевъ, Г. П. Сабсовичъ, П. Ф. Максимовъ, А. И. Павловъ, А. Е. Саломовъ, А. Турвонъ, проф. Ин. Канониковъ, В. Геевскій, агрономъ Ивановъ, кн. В. И. Массамскій.

Программа журнала обнимаетъ всѣ существенные вопросы по раціональному виноградарству и винодѣлію. Направленіе статей — научно-практическое, изложеніе—общедоступное.

Редакція журнала „Русскій Винодѣлъ“ будетъ помѣщать, среди другаго матеріала, и переводы основныхъ руководствъ по виноградарству и винодѣлію, имѣющихъ практическое значеніе; кромѣ того, будутъ печататься всѣ техническія новости по винодѣлію, торговыя и статистическія свѣдѣнія и т. д. „Русскій Винодѣлъ“, насколько возможно, будетъ бороться съ поддѣлкой винъ и тѣмъ самымъ будетъ содѣйствовать выработкѣ чистаго, натуральнаго вина.

„Русскій Винодѣлъ“ будетъ выходить 1 и 15 каждаго мѣсяца, въ размѣрѣ отъ пяти до восьми печатныхъ листовъ въ мѣсяцъ. Въ нынѣшнемъ году годовые подписчики получатъ какъ приложеніе "Болѣзни винограда и ихъ леченіе" соч. проф. П. Віала.

Условія подписки:

безъ дост. на годъ со всѣми приложен. 9 р., на полгода—4 р. 50 к. съ дост. и перес. на годъ 10 р., на полгода—5 р.

„Русскій Винодѣлъ“ принимаетъ объявленія по опредѣленной таксѣ, которая высылается по требованію безплатно.

Подписка принимается въ главн. конторѣ „Русскій Винодѣлъ“: С.-Петербургъ, Кирочная ул., д. Войницкаго, № 28, кв. 4, въ Тифлисѣ: въ Редакціи жур. «Агбюръ».

Ред.-изд. Александръ Альмедингенъ.

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1888 г. (VII г. изданія)

„РОДНИКЪ въ 1888 году будетъ издаваться при прежнемъ составѣ сотрудниковъ, въ томъ же духѣ и направленіи, какъ и минувшія 6 лѣтъ.



„Родникъ“ выходитъ 1-го числа каждаго мѣсяца, книжками большаго формата, со многими картинками.

„Родникъ“ рекомендованъ и одобренъ Учен. Комит. при Свят. Синодѣ, Собственной Е. И. В. канцеляріи по учрежден. Императрицы Маріи и Мин. Нар. Просвѣщенія. Циркуляромъ по Мин. Нар. Просв. (отъ 12 Мая 1887 г за № 7,289) предложенъ на случай выписки для библіотекъ низшихъ городскихъ училищъ и для младшихъ классовъ среднихъ мужскихъ и женскихъ Учебн. Заведеній, какъ журналъ вполнѣ отвѣчающій требованіямъ русской семьи и школы и служащій богатымъ источникомъ нравственнаго чтенія, проникнутаго духомъ религіи и преданности отечеству.

Годовые подписч. на „Родникъ“ изданія 1888 г. получатъ вмѣстѣ съ № 1

„СБОРНИКЪ СТИХОТВОРЕНІЙ ДЛЯ ДѢТЕЙ“,

составленный изъ произведеній русскихъ и иностранныхъ поэтовъ, со многими рисунками худ. М. Михайлова.

Для взрослыхъ вмѣстѣ съ **„Родникомъ“** высылается ежемѣсячно педагогическій листокъ

„ВОС[illegible]ІЕ и ОБУЧЕНІЕ“,

посвященный р[illegible]боткѣ вопросовъ дѣтскаго чтенія и критикѣ учебниковъ, учебн. пособій и книгъ для дѣтей и для народа.

УСЛОВІЯ ПОДПИСКИ НА 1888 ГОДЪ:

„Родникъ“ съ листомъ **„Воспитаніе и обученіе“** на годъ съ дост. и перес. 6 р.
„Родникъ“ безъ листка „Воспитаніе и Обученіе на годъ, съ дост. и перес. 5 р.
„Воспитаніе и Обученіе“ отдѣльно, на годъ, съ дост. и перес. . . . 2 р.

Адресъ редакціи и главной конторы: С.-Петербургъ, уголъ Знаменской и Баскова пер., д. 14—24.

Кромѣ того, подписка принимается, въ С.-Петербургѣ: въ книжномъ магазинѣ Фену и К°, въ книжномъ магазинѣ „Новаго Времени“ и въ „Русскомъ книжномъ магазинѣ“; въ Москвѣ: въ книжномъ магазинѣ „Сотрудникъ Школа“, на Кузнецкомъ мосту; въ Тифлисѣ: въ Редакціи журнала „Агбюръ“.

Редакторъ-Издательница **Е. Сысоева.**
Редакторъ **Алексѣй Альмедингенъ.**

Подробная программа „Родника“ и листка „Воспитаніе и Обученіе“ съ каталогомъ изданій редакціи высылается, по требованію, безплатно.

ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔԱՆԵՐՔ

ԵՒ

ԳԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 10

ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻԶ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, № 1|2
1887

«ԱՂԲԻՒՐ» ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԼԲՕՄ

---

† ԳԷՈՐԳ Գ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՀԻՄՆԱԴԻՐ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՃԵՄԱՐԱՆԻ

(13-*րդ տարեդարձի առթիւ*, 18 *սեպտեմբերի*)

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Октября 1887 г.

Типографія П. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и 2

ԱՍՊ ԵՒ ՔԱՄԻ

ասպոյտ երկնքում ամպեր են կիտվում
Անձրև պատրաստում.
Ամպերը գունդ-գունդ, շուտ շուտ հաւաք-
վում
Ջրով լցքցվում.
Թուխ-թուխ ամպերը իրար են շրփվում
Անձրև կաթկաթում.
Արօտ ու ծառեր ամեն դաշտերում
Ու այգիներում
Խընդում են, հրճւում:

Բայց ահա՛ քամին խրոտագին շընչեց,
Սուլեց ու փրչեց.
Քամին վերկացաւ, ամպերը քրշեց,
Հետքը կորցրեց.
Քամին սրւսրւաց, յուզուեց, կատաղեց,
Դոռաց ու գոչեց.
Արօտ-դաշտերի, ծառ-այգիների
Կեանք, շունչ ամպերին
Անդարձ աքսորեց:

Դաշտն արօտներով դեղնեց, չորացաւ,
Կիսաշունչ եղաւ.
Այգին ծառերով տերևթափ եղաւ
Ալեւորեցաւ.
Երկրագործն եկաւ, իւր դաշտը մրտաւ
Վայ գլխուն տրւաւ.
Այգեգործն եկաւ, իւր այգին մրտաւ
Նա շրւարեցաւ,
Նա մոլորեցաւ:

Երկրագործն կանգնեց իւր գաշտի միջին
Աչքը երկնքին.
Այգեգործն չոքեց մի ծառի տակին.
Ձեռքերը դոշին.
Մէկը արօտին, միւսը իւր ծառին
Կեանք, շունչ խրնդրէին.
Արօտն ու ծառը աչքերն երկրնքին՝
Սպասում էին,
Փըրկիչ անձրևին:

Անձրևը չեկաւ, ամպեր չրկայլին,
Ոչ անձրև տալին.
Դաւնաշունչ քամին վրչեց խիստ ուժգին,
Քըշեց ամպերին.
Ամպերը կորան ջուրը կուրծքերին
Ձունչը ծոցերին.
Ամպերը վախան անձրևը սրրտին
Կեանքը ծոցերին,
Յոյսը թևերին:

Արտը սպասեց, 'ի զուր սպասեց
Գեղնեց ու թառմեց.
Այգին սպասեց, իւր յոյսը կըտրեց
Գրլուխը ծրուեց.
Երկրագործն թոգեց, գէպի տուն քայլեց
Լացեց, հառաչեց.
Այգեգործն եկաւ, աչքերը սրրբեց,
Նա էլ տուն քայլեց,
Նա էլ հառաչեց:

ԸՆԾԱՑԱՑԻ

ՎԱՀԱՆ ՍԱՍԻԿՈՆԵԱՆ

(Հայոց Պատմութիւնից)

ՍԱՀԱԿ ԵՒ ԱՏՐՆԵՐՍԷՀ

Դ։

պրկը վերջանում է։ Երեկոյեան անուշաբոյր օդը մի կերպ թմրութիւն է ազդել երկու ձիաւոր ճանապարհորդներին, որոնք գնում են դէպի Արտաղի Գոմաձոր գիւղը։ Նրանց յոգնած ձիանները ծայրը թեռմբ են յառաջ գնում։ Ձիաւորները լուռ էին, ամեն մէկը իր մտքերի հետ առանձնացել էր։

Արեգակը մայր էր մտել, գիւղի հօտերը բառաչելով արօտներից դանդաղ յետ են դառնում դէպի ձորի ոգբիւրը։ Նրանց առաջնորդում է վոքբիկ հովուի սրինգը, որի բարակ ու քաղցր ձայնը լսելով առ ժամանակ կանգ են առնում մեծ ճանապարհով գնացող գիւղացիները։ Դրանցից մէկը, մի սպիտակահեր ծերունի նստեց ճանապարհի կողքին, որպէս զի չալ էշը կուշտ արածէ և հանգստանայ։ Գարնան խաղաղ օդը, սրինգը, անասունների աղաղակը այնքան դուրեկան էին ծերունուն, որ նա պառկեց կողքի վրայ, ահագին ցուպը գլխատակին դնելով։

Նա կը քնէր, եթէ չը լսէր հեռուից ձիու ոտնաձայնը։ Երկիւղը հարկադրեց կանգնել տեղից. սակայն

տեսնելով, որ էշը հանդարտ արածում է, հանգստացաւ և առաջ գնաց։ Ճուտով հասան ձիաւորները, որոնք մեզ յայտնի երկու լուռ ճանապարհորդներն էին։

—Այս մէկին ճանաչում եմ, իսկ այն միւսը առաջին անգամն է պատահում, ասաց ծերունին և կանգնեց, բարի երեկոյ մաղթեց եկողներին։ Նրանք միաբերան պատասխանեցին, իսկ մէկը աւելացրեց թէ ինչպէս է ապրում Սահակ հայրիկը։

—Բայց ո՞ւրտեղից, Գրիգոր եղբայր, հարցրեց ծերուկը, և ո՞ւր բարի։

—Ներսէհապատից ենք գալիս, հայրիկ, պատասխանեց Գրիգորը.—իսկ այս գիշեր գիւղում պիտի մնանք. ընկերս առաջ գնալ չի կարող։

Հայրիկը ուշադրութեամբ նայեց ընկերին և այժմ միայն իմացաւ որ դա մի զինուոր էր, որի աջ թևի վրայ վիրակապ կար դրած.

—Երևի ընկերդ կռուել է մէկի հետ, հարցրեց նա։

—Ոչ թէ մէկի, այլ շատ շատերի հետ։ Պիտէ չմոռանաս լսել, որ երէկ պատերազմ է եղել Ներսէհապատի մօտ։

Ծերունուն խիստ հետաքրքրեցին այդ խօսքերը։

—Ամբողջ երկու շաբաթ է սարերումն ենք լինում, պատասխանեց նա.—ո՞վ էր պատերազմողը. անցեայներում լսում էինք թէ աւազակների խմբեր են շրջում Արտապի սահմաններում...

—Ո՛չ, ո՛չ, հայրիկ. պատերազմը պարսիկների հետ էր։

Ծերունին վեր քաշեց յօնքերը և զարմացած նայեց Գրիգորին. այդ լուրը, երևի, սարսափ գցեց նրա մէջ։

—Չմոռանաս լսել Վահան Պամիկոնեանի անունը, շարունակեց Գրիգորը.—նա է մեր այժմեան սպարապետը։ Կռիւը շատ սաստիկ էր և Աստուծոյ օգնութեամբ մեզ համար լաւ վերջացաւ։

—Վահա՞ն, Պամիկոնեա՞ն... Եւ ծերունին սկսեց մը-

տաձել։—Մեր ոպարապետի ազգից։ Հա՛, ճանաչեցի, Հմա-
եակի միջնակ որդին։ Ես նրան տեսել եմ երբ նա դեռ
պատանի էր։ Ես ինքս էլ Տարօնից եմ, և երեսուն տա-
բեկան հասակումս զինուոր էի Վարդանի դնդում։ Այդ
սրսորդը մթթէ այժմ այդքան տաջ է դնացել։

—Այո՛, հայրիկ, եթէ երէկ տեսնէիր պատերազմի
դաշտում, անպատճառ՝ սուիծ Վահան կանուանէիր։

—Հօրեղբօր զոյգն է, ասաց Ծերունին շտապով և մի
ծանր հոգոց հանեց սրտից։—Ռուիծ, սուիծ հօրեղբայրն
էր, լուսահոգին։ Հօրից, պապից լսած չէի թէ այդպիսի
մարդ կը լինի։ Ես ինքս էլ կայի Աւարայրի պատերազ-
մում. և այն տարուց յետոյ բնակվում եմ այս կող-
մերում։

Յանկարծ նա փոխեց խօսքը.

—Ընկերիդ վէրքը վտանգաւոր է։

Զինուորը պատասխանեց, որ սրի մի թեթև քեր-
թուած էր, որ կտրել է մի երակ. և արիւնահոսութեան
տաջն առնելու համար վիրակապ էր դրել։

—Ես կարող եմ շատ թեթևացնել ցաւն, որդի, ասաց
Ծերունին.—Հին արհեստս չեմ մոռացել. Աւարայրի մար-
տից յետոյ շատ արիւնահոս վէրքեր եմ բժշկել։

Զինուորը հանդստացրեց Ծերունուն, որ ոչինչ վտանգ
չը կայ իր վէրքից,

Գիւղը մօտ էր. շների հաչոցը բոլորովին պարզ էր
լսվում։ Զինուորները դնում էին Ծերունու ոտով։

—Այո՛, Սահակ հայրիկ, երեկուայ մարտը փառաւոր
էր, խօսեց Գրիգորը, երբ նրանք բաւական տեղ լուռ
դնացել էին։

—Դու ուրեմն Վարդան ոպարապետի զինուորն ես
եղել, հարցրեց զինուորը։

—Այո՛, Վարդանի զինուորը։ Ո՞ւր է, կա՛յ այժմ մի
մարդ, որ կարողանայ արժանապէս ոգալ այդ հսկայի

մահը։ Մոռանում են հետզհետէ։ Բայց նա մեռաւ առիւծի պէս, նրա դիակը մեր աչքի առաջ ընկած էր. բոլոր կենդանի մնացած զինուորները երեխայի պէս լաց էին լինում նրա վրայ. այնքան սիրում էինք լուսահոգուն։

—Խիստ պէտք է լինէր պատերազմը, նկատեց զինուորը ծերունուն շատ խօսացնելու համար։

—Ի՞նչ խիստ։ Նետերի բազմութիւնը մթնացրել էր Աստուծու պարզ օդը։ Պարսիկները մրջիւնի պէս ցրվել էին դաշտի վրայ, վրերով կուվողները չոկ էին, ձիաւորները չոկ։ Ահ ու դողը պատել էր մեզ. կորցրել էինք մեր զօրավարներին, խառնվել էինք. ով ում հասնում էր, զարկում էր տապալում։ Սարսափելի ձայնն էր, որ որոտում էր ամեն կողմում։ «Քաջ տղերք, զարկէք», գոչում էր ու վահանը ձեռքում աջ ու ձախ մահ էր տարածում։ Բայց, ո՜հ, նոյն երեկոյին մենք որոնում էինք քաջի դիակը։ Նրան ես ճանաչեցի սրի խաչանիշ պատեանով որ շատ անգամ սրբել էի։ Նրան քնած կասէիր, եթէ չը տեսնէիր սրտի մէջ ցցուած նետը։—Ո՛չ, այդպիսի պատերազմ չի եղել և չէք տեսնելու։ Եւ այն ժամանակուայ հոկաները ո՞ւր են այժմ։ Երբ մի մի գնում եմ դէպի Տղմուտ գիւղը, լացս գալիս է, յիշելով մեր զօրքի դստաւորութիւնը, յիշելով և հայ քաջերի դիակները, որ պատերազմից յետոյ լացով կոծով բանակ էին բերում։ Այժմ չը կան այն քաջերը. մնացել են թուլասիրտ տղաները։

—Ոչ, հայրիկ, ընդհատեց Գրիգորը.—եթէ դու տեսնէիր երեկուայ կոտորածը, կասէիր որ դեռ քաջեր շատ կան։ Մեր Վեհափառը անձամբ եկել էր պատերազմ։ Կամսարական եղբայրները ինչ՞ էին անում, Տէր Աստուած...

—Վեհափառն էլ կար, ինքը Մանդակունին։

—Այո՛, նա ինքը։ Օրհնեց ամենքին, սիրտ տուաւ։

Իսկ երբ զինուորները յետ էին դառնում կոտորածից, նա նրանց առաջը գնաց սաղմոս երգելով։

— Ի՞նչ նմանութիւն անցեալին... Սիրտս մորմոքում է։ Պատմեցէք, որդիք, տենեմ էլ ինչ կար։

Եւ տեսնելով որ արդէն մութը կոխել է, ծերուկը շտապով աւելացրեց.

—Այս երեկոյ հիւր եղէք ինձ և պատմեցէք։

Զինուորը համաձայնեցաւ, իսկ Գրիգորն ասաց, որ ինքն էլ կը դայ մի ժամ կը մնայ Սահակի մօտ և էլի կերթայ իր ազգականի տունը, ուր պիտի իջևանէր։ Նրանք գիւղը մտան։

Քիչ ժամանակից յետոյ գիւղականի պարզ յարկի տակ վառած էր կրակը։ Սահակի հարսը ընթրիքի ետևից կացաւ, իսկ մուսոները շրջապատելով զինուորին, խօսեցնում էին երեկուայ օրի մասին։ Հիւրի դարուստը արագաբար տարածուել էր գիւղում և շատ գիւղականներ հաւաքուել էին պատմութիւնը լսելու համար։ Նախ իմացան, որ զինուորի տնունը Ատամ էր, Հրահատ Իշխանի մարդկանցից մէկը, որ գնում էր Գուլին մեծամեծներին և յատկապէս Կամսարական տիկնոջ պատերազմի անցքը պատմելու համար։

«Պարոնից զօրքը, պատմում էր Ատամ, բաժանուած էր չորս դնդի, որոնցից մէկը պատկանում էր Սիւնեաց Իշխան ուրացեալ Գրիգորին։ Այդ գունդը ամենից սրտապինդն էր և աշխատում էր խախտել մեր զօրքի ձախ թեւը։ Սպարապետը հրաման ղրկեց մեր միւս գնդերին տպասել, մինչև ինքը կը ցրուէր Սիւնեաց և Կատշաց գունդերը։ Մինչ-դեռ նա այդ բանն էր գլուխ հանում, պարսից միւս գնդերը մեզ վրայ յարձակուեցան և քանդեցին մեր կարգ ու կանոնը։ Պատերազմը անհնարին սաստկացաւ։ Շատերը ցրուեցան, իսկ շատ շատերը կը ցրուէին, եթէ չը տեսնէին մեր մարդպանի, Սահակ Բագրատունու

մեծ գործը։ Սա տեսնելով պարսից սպարապետ Ատրներսէհ Սաղարին, գնաց դէպի նրան։ Սպարապետը ամբողջ արեաց ազգի մէջ հռչակաւոր է իբրև մի անհնարին քաջ պատերազմող։ Մեր բոլորի սիրտը ջուր կտրեց, երբ տեսանք նրան, որ պատրաստվում էր աշտէն խրել մարզպանի կողի մէջ։ Բայց Բագրատունին շտապեց նախ ինքը նիզակ արձակել նրա վրայ. նիզակը սահեցաւ ընկաւ գետնին, չը կարողանալով ծակել Ատրներսէհի կարծը զրահը։ Կատաղեց վերջինս և նոյնպէս զարկեց նիզակը, բայց նոյնպէս անյաջող. զրահը պաշտպանեց և մեր մարզպանին։ Ահա այդ ժամանակ տաքացաւ սոսկալի մարտը. երկուսի ամենի ձիերը միմեանց մօտեցան, ծառացան նրանք, ինչպէս առիւծներ, յարձակուեցան միմեանց վրայ. Բռնեցին միմեանց մազերից, կռվում և կռվում էին, միմեանց ծեծում էին։ Մարզպանի բանը պրծաւ, տպաղակեցին մի քանիսները մեր կողմից. լաց լինողներ էլ կային։ Բայց յանկարծ տեսան, որ վիթխարի Ատրներսէհը ձիուց ընկաւ. էլ չը գիտենք թէ ինչպէս, բայց նա շուտով անհետացաւ կռի միջից։ Այդ խակ ժամանակ սպարապետը Կամսարական եղբայրների հետ մոլեգնաբար վրայ տուին։ Արքին պէս անցնում էր գաշտի վրայով Ներսէհ Կամսարականը և նրա եռելից խմբը, Հրահատ իշխանը։ Գուք տեսել էք թէ ինչպէս հասած թուրը գետին է թափվում, երբ թթենու ճիւղերից մէկը ստանում է սաստիկ հարուած։ Ահա նոյն օրինակ կոտրվում, գետին էին ընկնում պարսիկները։ Սպարապետը սպանեց պարսից մի զօրապետին, իսկ Ներսէհը մի ուրիշին այնպէս սաստիկ զարկեց, որ նա ձիու գլխով թռաւ, դետին գլորուեց։ Մինչ այդ ամենը կատարվում էր, յետ դարձան փախչողները և գործը վերջացրին։ Պարսիկները հալածական դառան, մենք յաղթեցինք»։

Գիւղացիները ապշած էին մնացած։ Իսկ ծերունի

Սահակի աչքերում երևացին արտասունքներ։ Նա շնորհակալութեան ջերմ ազօթք արաւ և էլի սկսեց Ատոմին հարց ու փորձ անել, մի անգամ ասածը երկու երեք անգամ կրկնել տալ։

—Ստուած յաղթութիւն պարգևեց մեր մարզպանի մենամարտով, վերջացրեց Ատոմը և բոլորը ընթրիքի նստեցին։

ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ԶՈՀԵՐ

Ե.

ոյն տարուայ սեպտեմբերի ամիսն էր։ Հայաստանի դէմքը կրկին էլի տխուր էր. Հիւսիսից հետզհետէ հասնում էին աղէտալի լուրեր։ Երեք ազնուազարմ այրիներ սգում էին իրանց զառն բախտը։ Մէկն էր Սահակ մարզպանի կինը, միւսը Վասակ Մամիկոնեանի կինը և երրորդը Հրահատ Կամսարականի կինը։ Վերջինը դեռ չէր մոռացել այն սուր կսկիծը, որ թողել էր նրա սրտում փոքրիկ Խորէնը, և ահա կորովի ամուսնու կորուստը զալիս էր սև օրը աւելի ևս մթնացնելու։ Ինքը Վահան սպարապետը փակուած էր Հայոց սշխարհի ծմակոտ վայրերում հարիւր հատ միայն հաւատարիմ մնացած զօրականների հետ։ Նրա թշնամիները զսհութեամբ շփում էին ձեռքները և հպարտ հպարտ ասում. «Ցարօնեցին հեռու չրգնաց. և շատ էլ լաւ եղաւ. նա չրկարողացաւ մարդկանց աչքը մոխիր փչել»։ Իսկ Ծերունի Յովհան կաթողիկոսը տրտում տխուր նստած էր Դուինում։ Նրա հայրական Ոգին ցաւում էր

Հայաստանցու հէք զաւակի վրայ։ Ի՞նչ կըլինի վերջը, ի՞նչ կըդառնայ Վահանը—ահա հարցեր, որոնք կտրել էին հայրապետի քունը։ Նա անդադար աղօթում էր...

Ո՞վ էր այդ ամենի պատճառը։—Մի վատշուէր օտարազգի, մի խարդախ մարդ։

Դա Վաչիտանդն էր։ Ազատամբուելով պարսիկներից, նա յանկարծ իմացաւ Միհրան զօրավարի արշաւանքը դէպի Վրաստան և այդ ժամանակ յիշեց, որ երբեմն Հայերը նրանից օգնութիւն էին խնդրել և դաշնակից էին իր հետ։ Ուստի հայերին օգնութեան կանչեց և երբ սրանք իրանց անխարդախ հաւատարմութիւնը ցոյց տալու համար գնացին ցոյց տուած տեղը, տեսան որ համարեա մենակ պիտի կռուեն պարսից դէմ. իրանք վրացիք շատ քիչ էին, իսկ հոներն խոստացած օգնութիւնը չբերին։

Պատերազմի ժամանակ շատ քաջութիւններ գործեցին հայերը, բայց վերջ ի վերջոյ ոտիպուեցան յետ դառնալ, որովհետև հայ բանակի մի մասը անցել էր Թշնամու կողմը։ Մեծ էր այդ կորուստը, բայց և ոչինչ ուրիշ կորուստների մօտ։ Սահակ Բագրատունին, Խորենացու լուսամիտ մեկենասը, ընկաւ պատերազմում. ընկաւ և Վասակ Մամիկոնեանը, իսկ Հրահատ Կամսարականը գերի ընկաւ պարսից ձեռքը. ձին սաստիկ արշաւելիս գցել էր նրան, իսկ ոտով երկար չէր կարողացել փախչել։ Միհրանը նրա վզին մի շղթայ անցկացնելով, տարաւ իր հետ։

Վահան սպարապետը իր մօտ մնացած հարիւր մարդկանցով ամրացել էր Տայոց աշխարհի Մկնաւինջ գիւղում, ժամէ ժամ սպասելով Թշնամուն և մի ժամ անդամ չը լքվելով և չմտածելով Թշնամու զօրութեան մասին։

Միհրանը, թէև գիտէր հայերի անհաշտ քանակութիւնը, բայց չէր համարձակվում պատերազմ սկսել Վահանի հետ։ Եւ համոզուած լինելով թէ իր զօրութիւնն ու տարած յաղթութիւնը բաւական խախտած կըլինի հայ

սպարապետի արիութիւնը, մարդ ուղարկեց նրա մօտ և պահանջեց անձնատուր լինել։

«Դու սպստամբեցար մեր դէմ և տեղ այդ դրութեանը հասար, լմայ էր տալիս Միհրանը.—ինքդ էլ գիտես թէ ինչ է քո պատիժը։ Բայց որովհետև քաջ ես, բաւական է միայն յօժարուիս խաղաղութեամբ հպատակուիլ արեայ արքային, այն ժամանակ ես կը հաշտեցնեմ քեզ նրա հետ և կաշխատեմ որ չը դրկուիս քեզ արժանի պարգևից։ Պէտք չէ թագաւորի ծառայութիւնը անդոսնել»։

Ի՞նչ կանէր մի ուրիշը, եթէ լինէր Վահանի տեղ։ Մի հարիւր մարդու հետ մնացած, քաջ զինակիցներին կորցրած, ընկած հեռու հիւսիսում մի լեռնական գիւղի մէջ, նա ոչ մէկից օգնութիւն չունէր սպասելի, իսկ Միհրանը կարող էր իր զօրակոյսով հասպ տալ, ճնշել նրան։ Եւ դեռ այսպիսի դրութեան մէջ նրան տառջարկում են հաշտութիւն, պարգևներ։

Ով ինչպէս կուզէր, բայց Վահանը պատասխանեց Միհրանին.

«Պարսից ծառայութիւնը ես չեմ անգոսնում, այլ ինքը թագաւորը։ Ծառայութիւնը սուրբ է, երբ մարդու ճշմարիտ արժանիքն է փայլեցնում։ Թագաւորն է ծառայութեան գլուխը և նա պիտի լաւ նայէ, որ կարողանայ լաւը վատից որոշել։ Բայց որտեղ տեսանք թէ նա գիտէ արժանաւորին ըստ արժանեաց դատել։ Ձեզ իսկ յայտնի է, որ Պերոզը իր գիւանում ամենքի առաջ ասել է, թէ աշխարհումս վատ մարդը և անպիտան գունդը ասորին է. բայց ասորուց վատթարագոյնը հայն է։ Եւ այս խօսքերը թագաւորի բերանից դուրս էին գալիս այն ժամանակ, երբ հայերը պարսկական զօրքերի շարքում արիւն էին թափում նրա համար, երբ հայոց եկեղեցին աղօթում էր նրա երկար կենցաղավարութեան համար։ Եթէ դու

լինէիր մի հայ, ինչպէս կրլսէիր այդ վիպասութիւնը։ Չը գիտեմ, բայց ինձ համար կասեմ, որ հոգով յօժար կրլինէի մահուանս հրամանը լսել Պերոզից, քան թէ այդ խօսքերը։ Ինչ վերաբերվում է խոստումներից, կասեմ որ այդպիսի պարգևներ շատ եմ ստացել այն ժամանակ, երբ իսաւարը պատել էր միտքս և ես ուրացել էի իմ հայրերի պաշտած Աստուածը։ Բայց այժմ դրանք ինձ համար դին չունին։ Ես պատրաստ եմ ապրել իրրև մի յետին աղքատ, պատրաստ եմ չարաչար մահով վերջացնել աղքատի ձեռօքս, բայց ոչ երբէք դաւաճանել հայրենիքիս Պերոզ արքայի շքեղ պարգևների յոյսով»։

Կոտաղեց Միհրանը։ Մինչդեռ իր մտքում Վահանի կոթուսան էր նիւթում, վրայ հասաւ Պարսկաստանից արքունի սուրհանդակը։ Պերոզը հրամայում էր Միհրանին Պարսկաստան առաքարել։ Այդ հրամանը խոստանում էր պարսիկ զօրավարի մի խորհուրդը, որ յղացրել էին դաւաճան ուրացողները։ Հաստատած լինելով, որ Վահանի և միւս ապստամբ հայերի հոգին կաթողիկոսն է, Միհրանը մտադիր էր մտնել անպաշտպան Դուինը և Մանդակունուն գերելով Պարսկաստան տանել իր հետ։ Բայց նա էլ ժամանակ չունէր, շտապեց ճանապարհ ընկնել։

Ա. ԲԱԲԱԽԱՆԵԱՆ

(Կը շարունակուի)

† ԼՈՒՍԱՅԵԱԼ, ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔ

(Մահուան 5-րդ տարեդարձի առթիւ, 24 հոկտեմբերի)

ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏ

Նո՛ս բարեաւ, իմ Հայրենիք,
Իմ մանկութեան սուրբ օրրան—
Քեզ պաշտել եմ ես վառ սրտով
Եւ կըպաշտեմ յաւիտեան։

Թէպէտ բախտը խլում է ինձ
Նուիրական քո գրկից,
Բայց երբէք նա կարէ ջնջել
Սուրբ անունդ իմ սրտից։

Ուր էլ լինեմ, ուր էլ ապրեմ,
Թէկուզ օտարութեան մէջ,
Սիրել եմ քեզ—և այդ սէրը
Կմնայ անխախտ ու անշէջ։

Մնա՛ս բարեաւ, իմ Հայրենիք,
Ինձ կեանք, արև պարգևող.
Մնա՛ս բարեաւ... վերջին անգամ
Համբուրում եմ քո սուրբ հող...

ԱՂԷՔ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

Նիժնի-Նովգորոդ.



ՌՈԲԻՆԶՕՆ

3.

Յոպէս ապրում և ապրում էր Ռոբինզոնը իր կղզու վրայ։ Ծառերի վրայ գտնուած բոլոր կոկոսի կաղինները արդէն կերել էր և հնար էր մտածում նոր սնունդ հաբելու։ Բակից դուրս գնալ վախենում էր, կարծելով թէ կղզու վրայ վայրենի մարդիկ կամ գազաններ կային։ Բայց երբ սաստիկ քաղց ունեցաւ, դուրս ելաւ, որ ուտելու բան որոնէ։ Դրսում արևը սկսաւ նրա գլուխն այրել։ Ռոբինզօնը վերադարձաւ և ասաց. «Ե՛կ ինձ համար մի հովանոց շինեմ»։ Մի հաստ փայտ առաւ, ծայրից բարակ ուռերով ճիւղեր կապեց սրանց վրայ կոկոսի տերևներ դրաւ և տերևները ձկան փշերով ճիւղերին ամրացրեց։ Այս փշերը հաւաքել էր ծովափի վրայ. ծովը շատ ձկներ էր դուրս ձգում. սրանք փտում էին, իսկ ոսկորները մնում։ Յետոյ չուանների մի պարկ հիւսեց որ ճանապարհին գտած պտուղները մէջը դնէ։ Քանի որ հովանոցն ու պարկը շինելու վրայ էր, արևը մայր մտաւ, և նա քնեց առանց մի բան ուտելու, անօթի։

Առաւօտեան վաղ վերկացաւ, պարկն ուսից կախեց, մէջքին՝ դատկի տեղ՝ չուան կապեց, տապարն անցկացրեց

գոտկի մէջ, Հովանոցն առաւ և գնաց սնունդ պտրելու։ Դաշտով էր գնում, անտառին մօտենալ վախենում էր— կարծում էր, թէ այնտեղ վայրենի մարդիկ կային։ Շատ մարդ եկաւ, բայց ոչինչ բան չէր պատահում. էլի յառաջ գնաց, թուփեր նշմարեց. մօտեցաւ, տեսաւ որ նրանց վրայ կանաչ հատիկներ կային. համը տեսաւ, համեղ չէին, ուտել չէր կարելի։ Բարկացաւ և թուփերից մինը արմատով դուրս քաշեց. այն ժամանակ տեսաւ, որ արմատի վրայ էլ հատիկներ կային, աւելի խոշոր, բայց ոչ կանաչ։ Ճաշակեց—դրանք էլ անհամ էին. այնուամենայնիւ վերցրեց այդ հատիկներից մի քանիսը, պարկի մէջ դրաւ և ասաց. «Պէտք կըգան»։ Դրանք էին դետնախնձորներ։ Ռոբինզօնն էլի շատ մարդ եկաւ և մի ծառի վրայ խնձորի նման դեղին և թթու պտուղներ տեսաւ. դրանք էին կիտրոններ. այս պտուղներից էլ քաղեց և պարկի մէջ ձգեց։ Երկար մանգալուց յոգնեցաւ և նստեց մի աղբիւրի մօտ, որ հանգստանայ և բան ուտէ։ Հէնց որ նրստեց և կոկոսի կաղինը կոտրելու վրայ էր, մի շուինդ լսեց. վախեցաւ և կաղինը վայր ձգեց։ Երբ չորս դին մտիկ արաւ, նկատեց որ ձայն հանողները մի տեսակ կենդանիներ էին. դրանք եկել էին ջուր խմելու աղբիւրից։ Այսպիսի կենդանիներ դեռ երբէք չէր տեսել, որովհետև նրանք ապրում են միայն տաք երկրներում։ Պարմնով եղջերուի նման են և ձիու գլուխ ունին։ Կոչվում են լամա։

Լամաները տեսնելիս Ռոբինզօնը յիշեց, որ վաղուց միս չէր կերել և կամեցաւ մի լամա սպանել։ Թաք կացաւ ծառի ետև և երբ լամաներից մինը ծառին մօտեցաւ, խփեց գլխին քարէ տապարով և սպանեց։ Սպանեց և միտք արաւ. «Ինչպէս ուտեմ սրան. հում միսն ուտել կարելի չէ. պտուկ չունիմ, որ եփել կարենամ, կրակ էլ չունիմ»։ Շալակեց իր որսը և տարաւ տուն։

Ճանապարհին յիշեց, ինչ որ լսել էր Հայրենիքում վայրենի մարդոց կրակ ճարելու մասին. այսինքն թէ նրանք երկու կտոր չոր փայտ են առնում և այնքան են քսում մինը միւսին, որ վառուին։ Եւ այս յիշելով Ռոբինզօնն ասաց. «Տուն որ հասնեմ, ես էլ այնպէս կրակ կը վառեմ»։ Տուն եկաւ, լամայի փորոտիքը հանեց, կաշին չորացնելու համար արևի տակ կախեց, մի փայտ առաւ,

միսը խորովելու շամփուր շինեց. յետոյ երկու կտոր փայտ առաւ և մինը միւսին քսել սկսեց, բայց կրակ չհանեց. որովհետև կրակ հանելու համար պէտք էր երկար ժամանակ քսել, իսկ նրա ոյժը չէր հասնում: Այն ժամանակ յիշեց, որ մի քանի աղգեր միսը թամբի տակ տրորելով, հում հում են ուտում: Գնաց երկու տափակ քար գտաւ. մէկի վրայ միսը դրաւ, միւսով թակել սկսեց. թակելուց միսն այնքան տաքացաւ, որ արդէն կարելի էր ուտել: Ռոբինզոնը մսի վրայ կիտրոն քամեց և նա շատ համեղ դարձաւ:

Ուտելուց յետոյ Ռոբինզոնը մտածեց, թէ ինչ պիտի անէր, երբ ձմեռը վրայ հասնէր: Զգիտէր որ այն կողմերը ձմեռ չի լինում. և ասաց «Վաղը որսի կերթամ, լամաներ կրբռնեմ և նրանց մորթուց ինձ համար մուշտակ, տաք կօշիկներ և զտակ կրշինեմ. այն ժամանակ ցուրտից չեմ վախենալ. լամաներն էլ հեղ են—նրանց բռնելը դիժուար չէ»:

Միւս օր Ռոբինզոնը կամենում էր որսի երթալ: Գրլուխը քարայրից դուրս հանեց թէ չէ, տեսաւ որ յորդ անձրևը էր գալիս: Կամեցաւ սպասել, մինչև որ անձրևը դադարի, բայց սա քանի գնում, սաստկանում էր: Յետոյ մրրիկ բարձրացաւ, կայծակը փայլատակեց և ամպերն այնպէս որոտացին, որ գետինը դղրդուեցաւ: Ռոբինզոնը մրրիկից վախենալով, քարայրի մէջ կուչ եկաւ և սպասում էր, որ փոթորիկն անցնի: Երբ որ ամպերի գոռումը դադարեցաւ, Ռոբինզոնը դուրս եկաւ քարայրից և ուզում էր որսի գնալ: Յանկարծ կայծակը նորից փայլատակեց և շանթն այնպէս սոսկալի ճայթեց, որ Ռոբինզոնն խպառ ուշաթափ գետնի վրայ փռուեցաւ: Ուշքի գալուց յետոյ տեսաւ, որ քարայրի մօտերքում ցիր ու ցան ոստեր և ճիւղեր էին ընկած. դրանք թափուել էին քարայրի կտրի վրայ գտնուող ծառերից. կայծակը նրանց ջախջախել էր: Եւ Ռոբինզոնը մտածեց. «Սանդուղքս այժմ ինչպէս կապեմ. ծառը չկայ, կասելու տեղ էլ չկայ»: Անձրևն արդէն բոլորովին դադարել էր: Ռոբինզոնը քարայրից վայր իջաւ և շատ ուրախացաւ, տեսնելով, որ ծառը կայծակից բռնկել էր և այրվում էր: Նա վեր առաւ մի խանձող և իր մօտ կրակ վառեց. յետոյ անցրեց միսը մի օր առաջ

շինած շամփուրի վրայ և սկսեց կրակի վրայ պտույտ տալ։ Երբ միսը խորվեցաւ, ծովափ վազեց, կոկոսի կճեպով ջուր քաշեց, բերաւ մսի վրայ ածեց և միսն աղիացաւ, որովհետև ծովի ջուրն աղի է։ Կուշտ ուտելուց յետոյ՝ Ռոբինզոնը մտածեց. «Ի՞նչ անեմ որ այս կրակը վառ պահեմ. քարայրի մէջ այս անել կարելի չէ. քարայրը փոքր է և այստեղ ծուխն ինձ կըխեղդէ։ Բակի մէջ որ պահեմ, անձրև կըգայ կըհանգցնէ... Եկ մի վառարան շինեմ»։ Յիշեց որ ծովափ գնալիս այնտեղ կաւ էր տեսել, և գնաց այն կաւից բերելու։ Կաւն անձրևից թրջուել էր։ Ռոբինզոնն այս կաւը շաղախեց, աղիւսներ շինեց և արևի դէմը դրաւ, որ չորանան։ Յետոյ տունն եկաւ ճաշեց, և սիրտը նեղացաւ։

«Գոնէ մի շուն կամ կատու ունենայի», մտածեց նա։

Չորս կողմը նայեց և տեսաւ որ վերևում սարդը ոստայն էր մանել. ճանճեր տուաւ նրան, որ ուտէ, և շատ ուրախ էր որ իր հետ մի սարդ էր բնակում։

Յետոյ բակ գնաց որ վառարանի համար փոս փորէ, փորելիս մի մեծ կտոր ոսկի գտաւ և ասաց ինքն իրան. «Ինչքա՞ն պէտք է այս ոսկին. այստեղ մարդիկ չեն բնակում, որ ես որանով մի բան գնէի։ Երանի թէ երկաթ գտնէի. այն ժամանակ ինձ համար մի կայծին կամ դանակ կըշինէի»։—Վեր առաւ ոսկին և դէն ձգեց։

4.

Միւս օր Ռոբինզոնը վաղ կերկայաւ, կրակի մէջ փայտ ձգեց և ուզում էր մնացած միսն էլ խորվել. բայց միսը տաքութիւնից փչացել էր և Ռոբինզոնն այն օրը միս չկերաւ։ Նորից ուզեց որսի գնալ և իր պարկը վերցնելիս՝ մէջը գետնախնձոր գտաւ։ Այս գետնախնձորը կրակի մէջ ձգեց, յուսալով որ նրանից մի բան դուրս կըգայ. յետոյ աղիւսներ շինելու գնաց և շատ աղիւսներ շինեց։ Յոգնեցաւ. հանգստանալու և ոստրէներ որսնելու համար ծովափ գնաց և այնտեղ աւազի վրայ մի տեսակ կենդանի նշմարեց, որ տակից և վրայից մի հաստ կեղև ունէր և միայն ներքևից չորս ոտք և մի գլուխ. ինքը կլոր էր։ Այս էր մի կրիա։ Կենդանին երկու փութի չափ ծանր էր և Ռոբինզոնը հազիւ կարաց տունն տանել նրան։

Տուն որ բերաւ, կեղևը տապտրով պատառեց, միջից միսը հանեց, խորվեց և կերաւ. մնացածն էլ ծովի ջրով սրսկեց որ տաքութիւնից չփչանայ։

Այդ միջոցին Ռոբինզոնը լիշեց, որ կրակի մէջ գետնախնձոր էր դրել. հանեց նրան, համը տեսաւ—շատ համեղ էր, և շատ ուրախացաւ, որ կարելի էր գետնախընձորը հացի տեղ ուտել։ Թոնիրը դեռ չէր կարենում շինել, որովհետև աղիւսները չորացած չէին։ Կամենում էր որսի գնալ և մտածեց. «Հապա միսն ո՞ւր դնեմ»,—և սկրսեց նրան չորացնելու հնար մտածել։ Վճռեց որ կարելի է միսը չորացնել, եթէ նրան թոնրի մէջ կախես։

Ռոբինզոնը ճանճրացաւ սարդից, և ուզեց մի ուրիշ կենդանի գտնել իր համար։

«Ի՞նչ լաւ կըլինէր, եթէ կարենայի մի լամայ բռնել և ընտելացնել»։

Նա մի երկայն չուան ոլորեց, ծայրից օղակ շինեց և ուզում էր միւս օր որսի գնալ ուղիւրի մօտ, ուր լամաները գալիս էին ջուր խմելու։ Չուանը պատրաստելուց յետոյ՝ գնաց լուացուելու ծովի մէջ. հանեց շապիկն և տեսաւ, որ կեղտոտուել էր և ծակոտուել։ Լուաց նրան, չորացնելու կախեց և ինքը ջուրը մտաւ։ Նրա լողացած տեղում շատ ձկներ կային. կարելի էր ձեռքով բռնել, իսկ ուռկանով կարելի էր մէկ անգամից հազար հատ բռնել։ Ռոբինզոնը ջրից դուրս ելաւ, շապիկը հագաւ և տուն գնաց։

Միւս օրը վաղ վերկացաւ, կապեց գօտին, դրաւ պարկի մէջ խորված գետնախնձորներ, մի կտոր կրնայի միս և գնաց լամաներ բռնելու։

Ճանապարհին տեսակ տեսակ թռչուններ էին պատահում նրան. ուզում էր գէթ մի թութակ բռնել և իրան ընտելացնել։ Թութակը սիրուն թռչուն է և կարող է խօսել, եթէ սովորեցնես։ Ռոբինզոնը լաւ դէս ու դէն էր նայում, որ մի թութակ գտնէ, բայց չէր գտնում. ծեր թութակ բռնել անկարելի է—շատ խորամանկ է։ Թութակի փոխարէն Ռոբինզոնը աղ գտաւ։ Ափի վրայ ծովի ջուր էր հաւաքուել քարերի մէջ, ջուրն արևից ցամաքելով, տակն աղ էր դուրս եկել։ Նա այս աղը պարկի մէջ լցրեց և գնաց լամաներ որսալու։ Նստեց մի ծառի ետև

և սպասում էր որ լամանները ջուր խմելու գան։ Երբ բոլոր երամակը վաղելով ջուր խմելու եկաւ, լամաներից մինը մօտեցաւ այն ծառին, որի ետև Ռոբինզոնն էր նստած։ Ռոբինզոնը ձգեց նրա վրայ չուանի օղակը և վզից քաշելով դէպի քարայրը թռուեց. լամայի ետևից վազելով գալիս էին և երկու փոքրիկ ուլեր։ Ռոբինզոնը չկարողանալով լամային ուլերի հետ միասին ցանկի միւս կողմը անցկացնել, կապեց նրան մի ծառից։ Կտրեց փոքրիկ ծառեր, գետնի մէջ տնկեց. և այսպէս մի փոքրիկ փարախ շինելուց յետոյ, լամային և երկու ուլերին այնտեղ քշեց։ Յետոյ Ռոբինզոնը քանդեց ցանկը մի կողմից, բակը մեծացրեց, լամաներին այնտեղ քշեց և խոտ տուաւ որ ուտեն։ Նա շատ ուրախ էր, որ այժմ մենակ չէր։

Լաման և ուլիկները շուտով ընտելացան նրան. նա իր ձեռքով խոտ էր տալիս նրանց, նրանք էլ չէին վախենում։ Ուլիկները շուտով դարձրեցան մօր ծիծն ուտելուց և Ռոբինզոնն սկսեց կթել նրան և կաթից կարագ շինել։

Սարդին էլ չէր մոռանում, ամեն օր ճանճերով կերակրում էր։

Ռոբինզոնը կամեցաւ այժմ կոկոսներ տնկել. իր կոկոսի կաղինները արդէն վերջացել էին։ Նա տուաւ վերջին հինգ հատը, գետնի մէջ թաղեց և կարճ միջոցում հողից բուսան փոքրիկ կոկոսենիներ։

Լամանները Ռոբինզոնին ընտելանալով, դարձան շան պէս հլու և կրում էին նրա համար ծանր բեռներ. նա մի քանի կողովներ հիւսեց ճիւղերից և այս կողովները զոյգ-զոյգ կապում էր և լամանների մէջքից կախում։

Աղիւսները որ չորացան, Ռոբինզոնն սկսաւ թոնիր շինել. շատ չանցած, թոնիրն էլ արդէն պատրաստ էր։

5.

Ռոբինզոնը մի երեկոյ ընթրիք արաւ և պառկեցաւ քնելու. լամաներն էլ իւր կողքին տեղաւորուեցան։

Հէնց որ քնի էր գնացել, նրա տակ մի բան թրնդաց, տսես թէ որսա լինէր, և երկիրը դղրդեցաւ։ Ռոբինզոնը վեր թռաւ, քարայրից դուրս վազեց, լամաներն

էլ ետևից վազեցին—գետինը թնդում էր և սասանում։ Ռոբինզոնը բակից դուրս վազելով տեսաւ, որ լեռը մի տեղ պատռուել էր և միջից կրակ ու ծուխ էր բարձրանում, քար ու մոխիր էր դուրս թռչում և հրեղէն գետի նման մի բան հոսում։ Դա լաւա էր։ Լաւան դոյանում է հալուած ծծումբից, ալբորակից, կրից. և հոսելիս վառվում է։ Ռոբինզոնը կարհուրեցաւ և սկսեց աւելի շուտ փախչել,—լամաներն էլ ետևից։ Փոթորիկն այնպէս սաստիկ էր, որ Ռոբինզոնը հազիւ էր կարենում վազել։ Այն օրուայ անձրևի պէս յորդ անձրև նա իւր օրումը չէր տեսել. ջուրը թափվում էր գետնի վրայ հեղեղի պէս։ Նա ինքը մի ծառի վրայ բարձրացաւ. իսկ լամաներին ջուրը տարաւ։ Ռոբինզոնը շատ մեղքացաւ լամաներին, բայց վախենում էր վայր իջնել, որ չխեղդուի։ Գետնաշարժն ու անձրևը որ դադարեցան, նա ծառից վայր իջաւ և մտածեց. «Այժմ քարայրս էլ, ցանկս էլ փուլ եկած կըլինին, թոնիրս էլ քանդուած. իսկ լամաներս խեղդուեցան—ջուրը դէպի ծով տարաւ նրանց։ Առանց բնակարանի և առանց լամաների ապրելը դժուար կըլինի ինձ. նրանք ինձ կաթն էին տալիս»։ Կուչ եկաւ ծառի տակ և այդպէս մինչև առաւօտ այնտեղ մնաց տխուր սրտով։ Լուսադէմին գնաց իւր քարայրը։ Զարմացել էր թէ չէ, լամաները վազելով իւր առջևն եկան։ Նրանք լիզում էին Ռոբինզոնի ձեռքերը և ուրախութիւնից ցատկոտում էին նրա չորս դին։ Քարայրը շատ փուլ եկած չէր, իսկ թոնիրն ու ցանկը մնացել էին անվնաս։ Ռոբինզոնն ուրախացաւ, որ քարայրը շատ չէր վնասուած, լամաներն էլ ողջ էին։

Ռոբինզոնն շտապեց հանել քարայրից վայր ընկած հողն ու քարերը և երբ բոլորովին մաքրեց, քարայրն առաջուանից աւելի մեծացաւ։ Բայց սարդը չկար. Ռոբինզոնը շատ պտրեց նրան, բայց չգտաւ. նա մնացել էր հողի տակ։ Յետոյ Ռոբինզոնը գնաց տեսնելու այն տեղը, որտեղից սկսել էր կրակ դուրս գալ. կրակն արդէն մարել էր, բայց տաք լաւան դեռ վազում էր, և վազում շիտակ դէպի այն կողմը, ուր որ բուսնում էր գետնախնձորը։ Ռոբինզոնը կարծեց թէ գետնախնձորը լաւայից այրուած կըլինի. բայց տեսաւ որ այրուած չէ, որովհետև լաւան չէր հասել այնտեղ։ Լաւայի հետ լերան միջից շատ

կրային քարեր էին ընկել. Ռոբինզոնը հաւաքեց այս քարերը, փշրեց և կիր ստացաւ. կիրն աւազի հետ խառնեց, աղիւս ստացաւ և սկսեց շինել մի քարէ պարիսպ։

Ամեն բան նորոգելուց յետոյ՝ պէտք եղաւ ձմեռուայ համար մսի պաշար պատրաստել. Ռոբինզոնն ութ հատ լամա բռնեց և մի այծ. լամաները մորթեց, իսկ այծին իւր լամաների հետ թողեց. մորթածների միսը վառարանի վրայ չորցրեց։ Այս ապուխտը քիչ թուեցաւ նրան և նա նորից գնաց լամաներ բռնելու, բայց չբռնեց,—որովհետև լամաներն արդէն ճանաչում էին նրան և չէին մօտենում։ Նա մի փոս փորեց, փոսն էլ ծածկեց ճիւղերով և խոտով։ Երբ լամաները ջուր խմելու եկան, Ռոբինզոնը յանկարծ ձայն հանեց. լամաները սարսափեցան փախան. իսկ երկուքը փոսի սէջ ընկան։

Լեռը մի տեղ փուլ էր եկել գետնաշարժից և կազմել էր մի քարայր։ Ռոբինզոնը այս որ տեսաւ, ասաց. «Սա մի լաւ մառան կըդառնայ միս պահելու համար. միսն այստեղ չի փչանալ»։ Ապուխտներն այնտեղ տարաւ և պահեց։

Յետոյ շատ խոտ քաղեց և մի դէզ դրաւ իւր բակի մէջ. բայց խոտը խոնաւ լինելով՝ տաքացաւ, մխաց և քիչ էր մնում որ այրուէր։ Այն ժամանակ Ռոբինզոնն այդ խոտը դէն ածեց, նորը քաղեց, լաւ չորցրեց, նորից մի դէզ դրաւ և ասաց. «Լամաներս այժմ ձմեռուայ ուտելու բան կունենան, սոված չեն մեռնիլ»։ Յետոյ վայտ կտրեց, շատ գետնախնձոր հաւաքեց, ծառի վրայ եղած բոլոր կիտրոնները քաղեց—պատրաստեց ամեն բան, ինչ որ պէտք էր, և սկսեց ձմեռուայ գալուն սպասել։ Բայց ձմեռը չէր գալիս։ Ամեն օր անձրևում էր, բայց եղանակը չէր ցրտում, միշտ տաք էր։

Ռոբինզոնը, քարայրի մէջ նստած, ոչ մի տեղ չէր դուրս գալիս և մտածում էր, թէ ինչ անէ։ Սկսեց կաւից կճուճներ թրծել և շինեց շատ կճուճներ և սլուտուկներ, երկու լաստեր և մի հատ տապակ (թավա)։ Այս բոլորը որ շինեց, ասաց. «Եկ մի ուռկան հիւսեմ ձուկ բռնելու համար». և սկսեց բարակ չուաններից ուռկան հիւսել, և մի շաբաթում հիւսեց պրծաւ։ Իսկ անձրևը գալիս ու գալիս էր, և Ռոբինզոնը ոչ մի տեղ երթալ չէր կա-

բենում։ Նա նորից միտք արաւ թէ. «Էլ ինչ շինեմ»։ Մտածեց շինել մի աղեղ և նետեր։ Գնաց մի ճկուն փայտ ընտրեց, ծայրերը տապարով քերթեց, քերթերի վրայ երկու ծայրերից ջուան կապեց և սկսաւ ճկել. փայտը լաւ փայտ էր և շուտ ճկուեցաւ։ Յետոյ նետեր շինեց, բայց երկաթ չունէր, որ ծայրերից անցկացնէր։ Եւ մտածեց. «Գուցէ ճկան ոսկորներից կարելի լինի սլաք շինել»,—և մինչ ոսկորներ հաւաքելու համար ծովափ գնալու վրայ էր, դտաւ այն ոսկին, որ հանել էր գետնից թոնիր շինելու ժամանակ։ Հրեց ոտքով այդ ոսկին և ասաց. «Անիծած ոսկի. ինչո՞ւ երկաթ չես, որ քեզնից նետերիս համար սլաք շինէի»։ Վերցրեց ոսկին և դէն ձգեց։ Յետոյ ծովափ վազեց, սուր սուր քարեր հաւաքեց և նետեր շինեց։ Եւ նետերն այսպէս էին. մի ծայրի վրայ ոսկոր էր, միւսի վրայ՝ փետուր։ Փետուրը նրա համար էր, որ նետերն ուղիղ թռչեն։ Նետերից զատ՝ շինեց իւր համար և մի նիզակ, և երկաթի տեղ՝ ծայրից անցրեց մի սուր քար։

Կճուճները որ չորացան, Ռոբինզոնը մտածեց. «Ե՛կ, մի կճուճի մէջ ճարպ դնեմ, պատրոյգ շինեմ, որ գիշերը քարայրիս մէջ լոյս լինի»։ Աղեց ճարպը կճուճի մէջ և կրակի վրայ դրեց հալցնելու համար. բայց երբ կճուճը տաքացաւ, բոլոր ճարպը միջից դուրս վազեց, քամուեցաւ։ Ռոբինզոնը մտածեց, թէ ինչից եղաւ այս, և յիշեց, որ կճուճն ապիկուած (չինած) չէր։ Այն ժամանակ կճուճը վառ կրակի մէջ դրաւ, որ այրուի և ապակու պէս դառնայ. բայց տաքութիւնից կճուճը պայթեցաւ և փշրուփշուր եղաւ։ Ռոբինզոնը շատ ափսոսաց և ասաց. «Կըսպասեմ մինչև որ անցնեն անձրևները. յետոյ բակիս մէջ կրակ կրփատեմ և այնտեղ կրփրձեմ—գուցէ յաջողի»։

Ռոբինզոնն սպասեց մինչև որ անձրևներն անցնին։ Նրա շապիկն ու վարտիկը մաշուել էին և չէր կարելի հագնել։ Նրա բնակած կղզու վրայ օդը միշտ տաք էր. այնտեղ կարելի էր ակլոր մանգալ. բայց շատ էլ ճանճեր ու մոծակներ կային, և այնպէս կծում էին, որ բոլոր մարմինն ուռչում էր։ Ռոբինզոնն սկսեց լամանների մորթուց կօշիկներ, վարտիկ և շապիկ պատրաստել իւր համար։ Մորթուց քարէ դանակով կտորներ կարեց. բայց չգիտէր թէ ինչպէս կարէր—ասեղ դերձան չունէր։ Նա ծակատեց

մորթու կտորները, չուաններով կապկպեց, և այսպէս ունեցաւ մի կաբայ, մի վարտիկ և մի զոյգ տրեխ—բոլորն էլ լամաների կաշուց։ Յետոյ կոշտ կաշուց մի գլխակ շինեց, մէջն աչքերի և բերանի համար ծակեր կտրեց, մի գլխարկ էլ շինեց—վերևը սուր ծայրով, և այս բոլորը որ հագաւ, դարձաւ զաղանի պէս բրդոտ մի բան, մարդու չնման։ Իսկ հին շապիկ վարտիկը հանեց, լուաց, քարայրի մէջ մի քարի վրայ փռեց և ասաց. «Այս էլ մեծ տօներին կը հագնեմ»։

Անձրևը դադարելուց յետոյ՝ Ռոբինզօնը ծովափ գընաց, սկսեց ծովի վրայ նայել, և սիրտը տրտմեցաւ։ Ափի վրայ նստեց և մտածեց. «Մէնակ ինչպէս պիտի ապրեմ այստեղ։ Գոնէ մի նաւ գար և տանէր ինձ դէպի տուն... Բայց նաւի մարդիկը ինչպէս կիմանան, որ այստեղ մի մարդ կայ։ Պէտք է մի նշան շինել»։

Քարայը գնաց, հին շապիկն առաւ, մի երկայն փայտ կտրեց, շապիկը ծայրից կապեց, գետնի մէջ տնկեց և ասաց. «Քամին շապիկս կը ծածանէ, նաւից կը տեսնեն և եռևիցս կը գան... Պէտք է մի բան գրել փայտի վրայ»։ Եւ սուր քարով փայտի վրայ փորագրեց, «Փ ր կ ե ց է ք խ ե ղ ճ Ռ ո բ ի ն զ օ ն ի ն»։

Անպատճառ կամենում էր ապրիկել իւր կճուճները։ Բակի մէջ կրակ վառեց և կճուճները մէջը դրեց։ Երբ նրանք կարմրեցան և յետոյ սառեցան, հանեց և տեսաւ, որ մէկի յատակը ապրիկուել էր։ Ռոբինզօնը յիշեց որ այդ մէկ կճուճի մէջ աղ կար, և ուզեց միւս օր բոլոր կճուճներն էլ աղի ջրով թրջել և վրայից աղ ցանել. բայց այդ միջոցին սիրտը սկսեց յետ դալ, և սատակի հիւանդացաւ։ Պառկած մնաց և չէր կարենում վեր կենալ. ոչ ոք էլ չկար, որ թոնրի մէջ փայտ ձգէր. այս պատճառով կրակը բոլորովին հանգաւ։ Ռոբինզօնը կարծում էր թէ մահը մօտեցել է. սկսեց աղօթք անել և մահուան սպասել։

Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

(Կը շարունակուի)

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ԺԱ.

ՍԵԻԱՆ



Լանում Ճգնաւորները են բնակում, մազէ զգեստները են հագնում, այդ է ձեր գիտեցածը Սեւանի մասին, իմ սիրելի ընթերցողներ. այդպիսի մի բան կայ, բայց դրանով չըպէտք է բաւականանալ, մենք պէտք է աւելի տեղեկութիւններ ունենանք Սեւանի մասին։ Ես թոյլ եմ տալիս ինձ ծանօթացնել ձեզ նրա հետ միայն մի քանի գծեր տողելով, կատարեալ նկարագիրը թողելով ձեզ։ Սեւանը ամենահին մի հայկական պատկաւելի յիշատակարան է. նա գուցէ միակ հաստատութիւնն է հին Հայաստանի մէջ, ուր նրա հիմնուելուց ի վեր հազար հինգ հարիւր տարուայ մեծ շրջանում միշտ գոյութիւն է ունեցել, միշտ չէն է եղել։ Նա մի վերին ստորձանի տաղջարար ամարանոց տեղ է, զուարճալի պարտէզը, ամառը հանգստանալ, կազդուրուիլ, թարմանալ ցանկացողների համար։ Նա բնութեան անհուն գեղեցկութեան մի կատարելատիպն է, մի հսկայական, կենդանի, անթառամ, ոսկեծղի պատկեր է, նման յաւերժահարսի՝ մշտընջենական գեղեցիկ, պայծառ, քաղցր. այդ ելէք Դեղամայ ծովակին, որի կապուտակ, վճիտ ջրերը շատ նշանաւոր բաներ կըպատմեն ձեզ, որ իմ գրիչը չի զօրում այստեղ գրել։ Սեւանն է նմանապէս մի Ճգնարան, անապատական կեանք վարել ցանկացող հոգեւորականների համար. սակայն ներկայումս բուն անապատական կենցաղի գաղափարին համապատասխան ոչինչ չըկայ. կան այստեղ, այո, մնացորդ չնչին նըշմարներ արտաքին ձեւականութեան, որ Սեւանի նախկին Ճգնաւորները մի-մի պահապան հրեշտակներ էին և զօրեղ

առաքեալներ, նրանք մարմնացեալ առաքինութիւն էին, և որովհետև օրինակը աւելի է ազդում քան խօսքը, ուստի եղան նրանք նորածին քրիստոնէութեան գօրավիգ, որպէս հրային մեծ վառարաններ՝ ջեռուցանում էին հաւատը, հզօր կերպով ազդում նրա տարածմանը, յաղթանակին և հաստատման։ Նրանք եռանդոտ կրակոտ հոգի, բանուկ, սուրբ միտք և սիրաբորբոք սիրտ ունէին. նրանց կեանքը մեծ միտք՝ մեծ դաղափար ունէր, որի իրագործման համար ամենքը գիտակցաբար և անձնուիրաբար ձգնում էին. այն է՝ վարել քրիստոնէական անբիծ, աշխատասէր գործօն և անձնուէր կեանք. քրիստոնէութեան նոր սկսուած ժամանակ, այդպիսի խիստ զոհողութիւններ, ճիգեր անհրաժեշտ էին, որ նա կարողանար հաստատուել։ Այդ խստակրօնութեան դարերն անցել են. այժմու քրիստոնեայ գործիչը, որ ուզում է եկեղեցուն—ժողովուրդին ծառայել, անշուշտ պահպանելով դարձեալ անբիծ վարքի, աշխատասիրութեան, անձնազոհութեան սկզբունքները, պիտի ժամանակին յարմար պատրաստուի և զինուորուի գործելու. հակառակ դէպքում նա կրկին կամ խաբեվայ, կամ փտած, անպիտան մարմին։ Ի հարկէ, չի կարելի այժմեաններին համեմատել նախնի ճգնաւորների հետ։

Պարզ է, որ Սնանը պիտի հիմնովին կերպարանափոխուի, ժամանակակից եկեղեցուն ծառայելու յարմարուի։

Լեռնային բարձր Սեմենովկա փոստային ինչևանից ինչնելով ղէպի Սևան, ինչ ազգի, վիճակի և կրթութեան ու ինչ հասակի մարդ լինի ճանապարհորդը, նա ամբողջապէս յափշտակվում է ծովակի սքանչելի տեսարանով, և նրա մբատմունքները խսպառ նուիրվում են նրան պննելու, դիտելու և հիանալու։ Անցնելով Զիրուխլու մեծ հայաբնակ գիւղի միջով, ճանապարհը շարունակում էք ուղիղ լճի ափով և հասնում էք փոքրիկ հայաբնակ Ցամաքաբերդ անունով գիւղը, որ ներկայացնում է մի բուռն անշուք խրճիթներ—30 տուն—ուղիղ ծովակի եզրին դեռեղուած։ Կղզին մտնել ցանկացողը պէտք է այստեղ իջնի և գնայ ուղղակի «վանատունը», որ մի գեղեցիկատես դիրքով վայելուչ շինութիւն է երեք սենեակից բաղկացած. այդտեղ մշտապէս իջնում է մի աբեղայ, որ ընդունում է ուխտաւորներին և ճանապարհ դնում դէպի կղզին և ուրիշ ժամանակ հսկում վանքի դրսի անտեսութեան։ Վանքը լճի վրայի երիտասարդութեան համար ունի եր-

կու լաստ, որոնք կազմուած են իրար ամրացրած ահագին գերաններից. դրանք մնացած են հին ժամանակից, այժմ անգործածելի մնում են, և երբեք նաւակ, որոնցից ամենամեծը կարող է տեղաւորել մօտ հարիւր մարդ, կամ կրել մօտ չորս հարիւր փութ մթերք։ Վանքը մեշտ պահում է չորս թիավար մշակներ։ Նաւարկելու համար դէպի կղզին, առհասարակ, վանատնից ոտով գնում են մինչև «նաւագուռն» կոչուած փոքրիկ ծոցիկը, ուրտեղից ջրի վրայով ուղիղ գծով մինչև կղզին մի վերստ է. այդ ծոցիկը գտնվում է մի սարի ստորոտում, որի թիկունքով անցնում է խՀուղին. սարը կոչվում է «Մաշտոցներ»։ Այդտեղից բարձր ձայն տալով, կղզու վրայից լսելով ձեր ձայնը, շուտով բերում են նաւակը և ձեզ տանում վանքը։ Կղզու հիւսիսային կողմի երկարութիւնով ընկած է մի շերտ նեղ տափարակ, որի վրայ մէկ ծայրից մինչև միւսը կան սաղարթախիտ ուռի և բարդի ծառեր, որոնք կազմած են մի ընտիր և պատուական Հեմելիք։

Կղզու մնացեալ մասն է ձուաձև մի սարակատար, տեղ-տեղ թուփերով և առհասարակ խոտաբոյսերով ծածկուած. կղզու արևելեան և հարաւային կողմերը սեպաձև ժայռեր են, որ շեշտակի իջնում են լՀի մէջ։ Տափարակի վրայ գտնվում են քսանի չափ յարմարաւոր սենեակներ ուխտաւորների համար. մի փոքրիկ քանդուած մատուռ. մի հասարակ քարաշէն եկեղեցի, ուր լինում է ժամասացութիւնը. դրան կից երկայն երկու շարքով մի մութ լայն միջանցքով շինուած են միայարկանի կաւաշէն, ագեղ, մութ, խոնաւ խցիկներ և խուցեր միաբանների համար. Հաշատուն, մառան, ամբար և այլն։

Վարդապետների խուցերը ունին մի-մի փոքրիկ պատուհան, իսկ ուրացուների, սարկաւագների խցիկները պատուհան չունին, այլ լոյս ստանում են վերևից, փոքրիկ շեղ յերդիկներից. այդ խցիկներում հազիւ երկու մարդ ապատ կարող են շարժուիլ. մութ, խոնաւ, օդը խեղդուած. անսովոր մարդը հազիւ կարող է 10 րոպէ այդտեղ նստել։ Սև անայ այժմու վանականներին կարելի է բաժանել երկու կարգի. հիններ և նորեր. հիններին հագնում են բրդի շալի շորեր. ամբողջ օր, թէկուզ ամենապայծառ եղանակին՝ խցերում փակուած են մնում. խուցերը կեղտոտ, անկարգ, գաղշահոտով լի, թանձր փոշի նստած ամեն տեղ, անկողինը չեն յարգա-

ցում երբէք Լայլն. Նորերն ընդհակառակը աշխատում են լրանց սենեակները մաքուր, սարքած պահել, գուարթ, ասողխօսող, երգող, գործ են ածում Ճերմակեղէն, ծխում են, կարդում են լրագիրները, հագնում են մահուդի և այլ կտորի զգեստ, շղթայազարդ ժամացոյց կախած (մինչև անգամ ոսկի ժամացոյց) Լայլն։

Օրը 4 անգամ կատարում են ժամասացութիւն. ցանկացողները կէսօրին մտնում են Հասարակաց Ճաշատունը, ուր տրվում է միայն մի ապուռ և մի բոքոն հաց. ամեն մարդ երբ ուզում է, մտնում է իւր բաժինն ուտում և չըսպասելով միւսներին դուրս է գնում. ապուռը կամ չորբան շինում են բրընձից, լոբուց, ոսկից Լայլն՝ եփելով ջրում և վրան ածելով քիչ ձէթ կամ իւղ. երեկոյեան ընթրիք չըկայ, այլ բաժնում են մի-մի կտոր հաց, երբեմն մի կտոր պանրի կամ մի քանի բոխու հետ Լայլն։ Ի հարկէ դրանով ապրել չի կարելի. դա միայն արտաքին ձևակատարութիւն է. իսկապէս ամեն մի խուց մի անձնական մառան և խոհանոց է, ուր ամեն ոք իր համար՝ դուռը պինդ փակելով, պատրաստում է «օրապահիկ», մինչև թէյ Լայլն։ Վանքի թանգարանը բաղկացած է երկու սենեակից. մէկում կան մօտ երկու հարիւր ձեռագիրներ և 400 տպուած գրքեր՝ կրօնական բովանդակութիւնով. միւս սենեակում գտնվում են զգեստներ, եկեղեցական ըսպասներ, սրբոց մասունքներ և այլն, որոնց մէջ կան մի քանի ուշադրութեան արժանի հնութիւններ. նշանաւոր է մի էկս արշինաչափ երկաթէ հաստարակ խաչ, որ ասվում է Սուրբ Նշան, որի կենտրոնում կայ ամրացրած մի փոքրիկ կտոր խաչափայտից. ուանդուրեամբ Աշոտ-երկաթի դրօշի խաչն է, մանաւանդ որ այնպէս է շինուած, որ ձողի վրայ հագցնուի. տարին մի անգամ շրջեցնելով դրան ամբողջ գաւառում, ժողովում են բաւական փող, ոչխար, երինջ Լայլն։

Վանքը յաճախ ունենում է եւրոպացի, ռուս հիւրեր և մասնաւոր ուխտաւորներ. բայց շրջակայ ժողովրդից ուխտաւորների մեծ բազմութիւն լինում է Վարդավառին և Վերափոխմանը։ Վանքը ունի կալուածքներ՝ երկու գիւղ—Յամամքաբերդ և Նրանից քիչ հեռու Գոմաձոր (40 տուն), խանութներ—Նէնովկա, Երևան, Թիֆլիս, Գանձակ. Ջրաղացներ՝ Նոր-Բայազիդ. հարիւր գլուխ խոշոր անասուն, երեսուն կով, ոչխար Լայլն։

Կղզու գագաթին կան երկու գեղեցիկ, քարաշէն, գըմբեթաւոր վանքեր, ուր տարին մի անգամ միայն պատարագ է լինում. դրանց շուրջը կան քանդուած տներ. օդի լաւութեան և շինութիւնների չորութեան համար, ի հարկէ այստեղ աւելի լաւ է բնակիլ, ինչպէս եղել է հին ժամանակ:

Այդ վանքերում կան շատ հին երկու մեծ սքանչելաարուեստ քանդակագործած դռներ, և սիւների չորս ահագին խոյակներ ամբողջապէս փայտից շինած:

Ն. ՏԷՐ-ԱԻԵՏԻՔԵԱՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

(Դիսանդէից)

ԱԶԳ ԵՒ ՏԵՍՈՂԱԿԱՆ ՊԱՏԱՒՐԱՆՔՆԵՐ

Ա.

Լ՝ չքը չափազանց քնքոյշ տեսողական գործիք է և այն երևոյթները, որոնք պատկանում են տեսողութեան՝ պիտի համարել ամենաբարդ երևոյթների կարգից։ Այս գլուխը մենք բացառապէս կը նուիրենք հետաքրքրական պատրանքների նկարագրութեան. այդ մասին եղած գիտողութիւնների համար՝ հարկաւոր չեն ամենևին թանգ գործիքներ։ Առաջ բերենք մի քանի օրինակներ։

Աչքերէ չենք կարողանում ճիշտ որոշել գանազան իրերի արանքների կամ նեղլիկ ծակերի չափը, որոնցով անցնում է պայծառ լոյսը, վասն-զի այդ միջոցում արանքները և ծակերը աւելի լոյշ, աւելի լայն են թւում մեզ՝ քան թէ են նրանք իսկապէս։ Վանդակի, որի թելերի արանքները իրանց լայնութիւնով հաւասար



(№ 1)

են նոյն իսկ թելերին՝ միշտ աւելի լայն են թւում, երբ նրանցով անցնում է լոյսը։ № 1 պատկերը ներկայացնում է մի քառակուսիկ՝ սպիտակ մակարդակի վրայ և մի քառակուսի սև մակարտակի վրայ, որոնք գիծ-առ-գիծ իրար խստառ հաւասար են, սակայն սպիտակ քառակուսին սև մակարդակի վրայ աւելի մեծ է երևում մեր աչքին, քան սևը՝ սպիտակի վրայ։

Մի նուրբ բարակ լար՝ եթէ բռնենք մեր աչքի և արեգակի կամ ճրագի լոյսի դունդի կենտրոնական գծի դէմ յանդիման, մենք այլևս չենք կարողանալ նրան՝ լարին՝ տեսնել, որովհետև երկու լուսաւորուած մակերևոյթները, որոնք ընկած են մեր աչքի տեսողութեան դաշտում բարակ լարի երկու կողմում, միաւորվում են և կարծես կպչում են իրար իրանց մօտակայ ծայրերով։ Այնպիսի նկարների վրայ, ինչպէս է օրինակի համար շախմատի տախտակը, որ կազմուած է սև ու սպիտակ քառակուսիներից, սպիտակ քառակուսիների անկիւնները միաւորվում են, լոյսի ճաճանչաւորութեան պատճառով և բաժանում են իրարից սև քառակուսիները—տես նկար № 2։



(№ 2)

Եթէ վեր առնենք մի կլոր տախտակ, որի վրայ երկու հակառակ գոյների համահաւասար հակադիր դասաւորութիւն կայ, ինչպէս ցոյց է տուած № 3 պատկերի վրայ, ու սկսենք սաստիկ արագ պտոյտ տալ, յատուկ դրա համար ֆիզիկոսներից հնարած պտուտակի միջոցով, այն ժամանակ այդ կլոր տախտակը կամ լիսեռնիկը մեզ կերևայ որպէս համահաւասար դորշ գոյնով ներկած։ Իսկ եթէ այդ ձև լիսեռնիկի վրայ դասաւորենք բազմաթիւ ուրիշ զանազան



(№ 3)

գոյներ, այն անհրաժեշտ պայմանով, որ նրանք համահաւասար չափով վեր առնուած լինին, էլի կրգանք նոյն հետեւանքին, այսինքն լիսեռնը պարտելիս կրստացուի միատեսակ բաղադրեալ գոյն:

Շարունակենք մեր նկատողութիւնները և պատմենք այն պատրանքների մասին, որոնք վերաբերում են աչքով տարածութեան չափը որոշելուն: Այսպէս, օրինակի համար, միևնոյն տարածութիւնը աւելի մեծ է թւում, եթէ նա բաժանած է մասերի: Ուստի № 4 նկարի վրայ ա բ գիծը հաւասար է երեւում իր շարունակութիւնը կազմող բ գ գծին, թէպէտ իսկապէս ա բ գիծը մեծ է բ գ գծից:

(№ 4)

Այն վարձերի ժամանակ, երբ կամենում ենք բաժանել գծերը աջ և ձախ երկու հաւասար մասերի, մենք նկատում ենք, որ աջ աչքը միշտ մեծացնում է աջ մասը, իսկ ձախը ընդհակառակը իր կողմն է քաշում: Այդ դէպքում ճիշտը որոշելու համար պէտք է թուղթը, որի վրայ քաշած է գիծը՝ շրջել, և երկու երեսի ցոյց տուած միջինը վեր առնել: Այդ օրինակ պատրանքները աւելի զարմանալի են լինում, երբ այն տարածութիւնները, որոնց մենք ուզում ենք համեմատել իրար հետ՝ մասերի են բաժանուած զանազան ուղղութիւնով: № 5 նկարի վրայ ա և բ երկու ձևերը՝ երկու ճիշտ հաւասար քառակուսիներ են. բայց նրանց վրայ նայած միջոցին ա ձևը թւում է իբր թէ աւելի երկայն է, քան թէ լայն, իսկ բ ձևը թւում է թէ աւելի լայն է, քան թէ երկար:

(№ 5)

ԽԱՉԻԿ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հսկայ սպունգ։—Նիւ-Եորքի մէջ այժմ ի՛նչ հանուած է մի ամենամեծ սպունգ, որ Ֆլորիդայի ծովափունքն է գտնուած. այդ սպունգի շրջապատն է ութ ոտնաչափ. դրանից առաջ յայտնի էր միայն Միջերկրական ծովում գտնուած մի սպունգ, որ այժմ պահվում է Ֆիլադէլֆիայի Թանգարանում եւ որ ունի տասը ոտնաչափ շրջապատ. այս հսկայ-սպունգը կարող է ծծել 50 լիտր ջուր եւ մի փոքրիկ խուղի տանիքի նմանութիւն է բերում։

—

Ինչպէս կարել ասպակին։—Ասպակին, բայց մանաւանդ թանձր ասպակին կլկտրուի, եթէ բեւեկնի իւղի մէջ թաթխած կանեփի թելով կապենք այն տեղն, որ կըտրել կուզենք։ Թելը վառելուց յետոյ, ասպակու վրայ պաղ ջուր են ածում, եւ մի թեթեւ ճնշումից ասպակին թելի ուղղութեամբ կըտրվում է։

—

Մեղուի թոյնը։—Մեղուն իր խայթոցի թոյնը ոչ թէ միայն թափում է խածած վէրքի մէջ, այլ նաեւ, ինչպէս նոր քննութիւնները ցոյց են տալիս, նա գործ է ածում այդ թոյնը իր հանած մեղրը տեւական, դիմացկուն անելու համար, որ նա շուտով չըփչանայ։ Օրինակ Ամերիկայի անթոյն մեղուները շատ քիչ մեղր են ածում, վասն զի նա շուտով ապականվում է։ Ուստի մեղուն իր խայթոցին կաթիլները մեղրի մէջ կըլցնէ, որով մեղրը անապական կըլինի։ Նոյնպէս մրջիւնները իրանց ամբարած հատիկները ծլելուց կամ փթթելուց ապահովելու համար, իրանց մրջնաթթուն են ածում. եթէ մրջիւնները հեռացնեն բնից՝ հատիկները կսկսեն ծիլ արձակել։

—

Ծակոտկած ասպակի։—Փարիզում մի տեսակ նոր, պիտանի ասպակի է դուրս եկել, որ մօտաւ-մօտ ունի ծակեր, որոնց միջով սենեակի օդը կարող է մաքրուել։

—

Պատուհանը բաց քնել։—Անիրաւ կերպով վատահամբաւ եղած է, իբր թէ գիշերը պատուհանը բաց քնելը վնասակար է. այդ միայն ուղիղ է այն երկիրների համար, որոնք ճահճային են, վասն-զի գիշերները ճահիճների խոթաբեր գոլորշին սկսում է վեր ելնել։ Իսկ ցամաք, լեռնային երկիրներում եւ տների վերին դոտիկների օդը գիշերը աւելի մաքուր եւ առողջ է քան ցերեկը։ Ուրիշ բան է, որ պատուհանը բաց թողնելով, մարդ պիտի նայի եւ յարմարաւոր միջոցներ գործ դնի չըմրսելու համար։

—

Հոտոտելիք։— Ամերիկայի բժիշկները բազմատեսակ փորձեր եւ հետախուզութիւններ անելուց յետոյ՝ գտան որ տղամարդիկ շատ աւելի սուր հոտառութիւն ունին, քան կիները. ուստի կիների անուշահոտ իւղերով չափազանց օծուիլը այսուհետեւ հակառակ պատճառով պիտի մեկնուի, այսինքն նրանց հոտոտելիքի թուլութեամբ, որ սուր բուրումն է պահանջում։ Վերոյիշեալ փորձերը այս կերպ էին անում. 1 չափ հոտաւէտ նիւթ լուծելով 100,000 չափ ջրի մէջ՝ մարդիկ առնում էին հոտը, իսկ կանայք հազիւ 20,000-ի մէջ լուծուածից կարողանում էին ըզգալ հոտը։

—

ԱԹԱՆ ՀԵՌԱԳԻՐ

Ամերիկացիները, անկասկած, ամեն ազգերից աւելի հնարագէտ են։ Ահաւասիկ մի նոր ապացոյց է տալիս մեզ Նիւ-Եօրքից դէպի Գոթա ղրկած մի հեռագիր։ Հեռագրի բովանդակութիւնը հետևեալն է. «Գ. Թուղթ Յովհաննու, 13—15»։ Հեռագիրն ընդունողը Նոր-Կտակարանը թերթում է և գտնում է այն տեղ ընդարձակ մի նամակ, որ այս է. «Շատ բան ունէի քեզ գրելիք, բայց չեմ ուզում թղթով և թանաքով գրել։ Վասն զի շուտով յոյս ունիմ քեզ տեսնել և բերան-ի բերան բարևել իրան։ Խաղաղութիւն ընդ քեզ։ Ողջոյն կըտան քեզ սիրելիք։ Ողջոյն տուր մեր սիրելիներին, իւրաքանչիւրին անուն անուն։

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առաջ. Ե. Աւետիսեանի.

Անշունչ բան եմ, բայց շատ դօրեղ,
Ունիմ մեծ ուժ ու ձայն ահեղ,
Եւ բազմավանկ չէ իմ անուն,
Այլ երկու վանկ է հաստատուն։
Ոչ մի բանից ես չեմ սարսիլ,
Թէ որ ուզիս մի տեղ դրկիլ,
Խնդիրդ իսկոյն կրկատարեմ,
Ուզած տեղդ մահ կրտանեմ։

Առաջ. Նոյն։

Զօրս եղբայր ենք մենք անբաժան,
Մարդկանց քամուց, ցրտից պաշտպան.
Աչքեր ունինք մեծ, ահռելի,
Ամեն մարդոց հրապուրելի։

Փոքրիկ ընթերցող, անշունչ է,
Ապա իմացիր թէ ինչ է։

Առաջ. Նոյն

Այս ցանցերի մէջ պէտք է տեղաւորել – 2 ու, 3 շ, 1 ն, 3 մ, 2 ե, 2 ղ, այնպէս որ ինչ բառեր կազմվում են վերևից ներքև կարդալիս, նոյն բառերը կազմուին ձախից աջ կարդալիս։



Ի՞նչ որ ամսումն է, որ մարդիկ քիչ են խօսում, գործում, Հանդստանում.

Էս կուռը սար, էն կուռը սար, մէջը արդար։

ԱԼԱՍԸՆԳԻ



Առաջ 3. Ղազարեանց.

Ունիմ մէկ բառ,
Որ է ուժ տառ.
Ուշկ ու մտքով
Դարան վեր առ:

Մի փոքր նախ մտածիր,
Տառերի տեղերը փոփոխիր.
Եւ եթէ լաւ այդ բառը գտնես
Տասն ամբողջ բառ կըտեսնես:

I. Բառ.

Խօսում է, մարդ չէ,
Մլաւում է կատու չէ
Ուրիշ ոչ մի կենդանի չէ.
Ասա մտածիր այդ ինչ է:

II. Բառ.

Ոչ խօսում, ոչ շարժվում,
Ոչ ուտում և ոչ խմում.
Բայց երբ ինքդ տեսնում ես
Իսկոյն նորան յիշում ես:

III. Բառ.

Գեղեցիկ և հրաշալի
Զայնիկ մի ունի,
Ամեն լսողաց
Նա կըգրաւի:

VI. Բառ.

Սա էր մի քաջ զիւցազն,
Որ էր ազգաւ հայազն.
Դէմքով նման անմեղ կուսին,
Գեղեցիկ էր, որպէս լուսին:

V. Բառ.

Թէև խսկապէս ոչինչ է,
Բայց ամենիս համար թանկ է.
Ինչ որ ուզես կարող ես,
Նրէ նորանից ունես:

VI. Բառ.

Նոր ստեղծուած
Աշխարհ է եկած,
Ամեն կենդանիներից
Սիրուած է ծնած օրից:

VII. Բառ.

Նոր հնարած մեքենայք
Նորանով են պարծենում.
Հէնց այդ միևնոյն գործում
Նոցա ոյժն է կայանում:

VIII. Բառ.

Ուր որ գնաս
Ուր որ շրջիս,
Ամենայն տեղ, կայ դրանից.
Աշխարհիս ստեղծման օրից:

IX Բառ.

Հեղա միջոց է,
Հեղու նիւթեր,
Այդ գործիքով
Տեղափոխել:

X. Բառ.

Ահա եկաւ և վերջին,
Թէ յիշում ես անցեալին.
Թէ առաջինք գտել ես,
Սա էլ մետաղ է. կարող ես:

Թէ որ ուզում էք
Էլի պարզ ասել.
Մէկ «վերնագիր» է
Կարող էք գտնել:

ԼՈՒԾՈՒՄՆ «14 ԲԱՌՈՎ» ՀԱՆԵԼՈՒԿԻ

Լուծեց Դ. Ս. Յովհաննէսեան Պօլսեցի.

1. *Գայլեր.* 29, 35, 36, 37 13, 14.
2. *Կացին.* 4, 31, 32, 33, 10.
3. *Մեր.* 1, 15, 16.
4. *Թացան.* 7, 27, 26, 24, 25.
5. *Դու.* 14, 5, 6.
6. *Նու.* 30, 47, 48.
7. *Զլխնչ.* 18, 49, 3, 38.
8. *Աման.* 2, 21, 9, 44.
9. *Նա.* 23, 27.
10. *Էք.* 39. 28.
11. *Քան.* 40, 42, 20.
12. *Քօռ.* 34, 11, 43.
13. *Լալ.* 46, 22, 12.
14. *Եա.* 8, 45։

Այս բառերուն ամեն մի գրոց դիմացի թուանշանները գնելով աղիւսակին մէջ՝ կստանամք հետեւեալը.
Մանկութեան օրեր երազի նման.
Անցաք գնացիք այլ չէք դառնալու։

Կոմս-Էմանուէլի։

Մ	ա	ն	կ	ո	ւ
թ	ե	ա	ն	օ	ր
ե	ր	ե	ր	ա	գ
ի	ն	մ	ա	ն	ա
ն	ց	ա	ք	գ	ն
ա	ց	ի	ք	ա	յ
լ	չ	է	ք	դ	ա
ռ	ն	ա	լ	ո	ւ

Նախընթաց №№-ի մէջ եղած հանելուկների և բեբուսի բացատրութիւնները։ Հանելուկների բացատրութիւնը՝ 1) Հայրենիք. 2) Նշխարհք. 3) Կաչաղակ. 4) Ձու. 5) Մոշը. 6) Մանկութեան օրեր երազի նման անցաք գնացիք այլ չէք դառնալու։ Բեբուսի բացատրութիւնը՝ կինն է այն առանցքը, որի շուրջը պտտվում է քաղաքակրթութիւնը։

Ժամանակաւոր խմբագիր-հրատարակիչ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑ